

## Հարց

Եթե առևտրային հաշվառքի սարքի խախտումը կատարվել է միտումնավոր, ապա ինչպե՞ս է այն պայմանավորվում:

## Պատասխան

Եթե առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումը պայմանավորված է սպառողի գործողություններով, ապա մատակարարը սպառողի հետ կազմում է առևտրային հաշվառքի սարքի խախտման ակտ և կարող է դադարեցնել նրա էլեկտրամատակարարումը, բացառությամբ վերջին պարբերությամբ նախատեսված դեպքի: Նման դեպքում սպառողի կողմից տվյալ ամսում ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է խախտմանը նախորդող մեկ տարվա տվյալ եռամսյակի ծախս ունեցած ամիսների, իսկ այդ ժամանակահատվածում ծախսի բացակայության դեպքում առևտրային հաշվառքի սարքի վերականգնմանը հաջորդող առաջին ծախս ունեցած ամսվա, միջին օրական ծախսի հնգապատիկի չափով: Սպառողը պարտավոր է վճարել առևտրային հաշվառքի սարքի խախտման ակտի հիման վրա հաշվարկված գումարը: Եթե մատակարարը դադարեցրել է սպառողի էլեկտրամատակարարումը, ապա այն պարտավոր է վերականգնել համաձայն էլեկտրական էներգիայի մարակարարման և օգտագործման կանոնների 52-րդ կետով սահմանված ժամկետներում և կարգով: Առևտրային հաշվառքի սարքը վերականգնում է մատակարարը՝ խախտման հայտնաբերման պահից առավելագույնը 3 սպասարկման օրվա ընթացքում: Առևտրային հաշվառքի սարքը վերականգնելու համար սպառողը պարտավոր է հատուցել մատակարարի կրած վնասը՝ հետևյալ չափերով.

ա) եթե հաշվառքի սարքերը՝ համաձայն հավատարմագրված անձի կողմից տրված եզրակացության, ենթակա են վերականգնման՝

2000 դրամ՝ 0,22 կՎ լարման սպառողների դեպքում,

5000 դրամ՝ 0,4 կՎ եւ բարձր լարման սպառողների դեպքում.

բ) եթե հաշվառքի սարքերը՝ համաձայն հավատարմագրված անձի կողմից տրված եզրակացության, ենթակա չեն վերականգնման՝

10000 դրամ՝ 0,22 կՎ լարման ինդուկցիոն հաշվիչներ ունեցող սպառողների դեպքում,

20000 դրամ՝ 0,22 կՎ ստատիկ կամ 0,4 կՎ ինդուկցիոն հաշվիչներ ունեցող սպառողների դեպքում,

120000 դրամ՝ 6 (10) կՎ եւ բարձր լարման սպառողների դեպքում:

Առևտրային հաշվառքի սարքի խախտման ակտին չհամաձայնելու դեպքում սպառողն իրավունք ունի 3 աշխատանքային օրվա ընթացքում այն բողոքարկել Հանձնաժողովում՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով մատակարարին: Մատակարարն իրավունք չունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը, եթե Հանձնաժողովը, ստանալով սպառողի դիմումը, գրավոր միջնորդում է չդադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ մինչև բողոքարկված ակտի վերաբերյալ որոշում կայացնելը: Վեճի լուծման նշված ընթացակարգը չի սահմանափակում սպառողի իրավունքը՝ ակտը բողոքարկել դատական կարգով: Միևնույն ժամանակ սպառողը պարտավոր է վճարել սպառած էլեկտրաէներգիայի՝ իր կողմից չվիճարկվող մասի համար: